Այսօրեն միավորվում են հին ու նոր պայքարները

Սեպտեմբերի 21-ը Արագածոտնի մարզի Թալինի շրջանի Ներքին Սասնաշեն գյուղում տոնվում էր բացառիկ շուքով ու հանդիսավորությամբ: Ողջ Հայաստանի համար խորհրդանշական այդ օրը հատկապես սասնաշենցիների համար նշանավորվեց եւս մեկ կարեւոր իրողությամբ: Հայաստանի երրորդ հանրապետության անկախության հռչակման օրը Ներքին Սասնաշենում տեղի ունեցավ հուշահամալիրի հանդիսավոր բացում. համալիր, որ ներառում է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարը, Հայրենական պատերազմում զոհված 27 սասնաշենցիների հիշատակին կառուցված հուշակոթողը եւ արցախյան հերոսամարտում փառքով ընկած, ՀՅԴ անդամ, համագյուղացի Հենրիկ Հովհաննիսյանի հիշատակին կանգնեցված հուշարձանը, որի բացման պատիվը տրվեց արցախյան ազատամարտիկի կրտսեր որդուն՝ տասնամյա Դավիթ Հովհաննիսյանին՝ մի ընտանիքի շառավիղին, որի երեք սերունդը միաժամանակ մարտնչում էր Արցախում:

Արագածոտնի թեմի առաջնորդ Վազգեն վարդապետի գլխավորությամբ տեղի ունեցած հուշարձանների օրհնության արարողությունից հետո ողջույնի խոսքով հանդես եկավ Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետյանը: Նա նաեւ կարդաց ՀՀ նախագահի ուղերձը, համաձայն որի Սասուն ջոկատի ազատամարտիկ Հենրիկ Հովհաննեսի Հովհաննիսյանը հետմահու պարգեւատրվել է «Արիության» շքանշանով:

ՀՅԴ Հայաստանի ԳՄ անունից ողջույնի խոսք ասաց ԱԺ պատգամավոր Արմեն Ռուստամյանը: Նա հուշահամալիրը որակեց որպես պայքար ու հաղթանակ մարմնավորող մի սրբավայր, որտեղ ոտք դնողը կհաղորդակցվի այդ պայքարի ոգուն ու գաղափարներին: Ողջույնի ու շնորհավորական խոսքեր ասացին Սասնաշենի գյուղապետ Ղուկաս Հակոբյանը, Երեւանի քաղաքապետի տեղակալ Կամո Արեյանը եւ ուրիշներ: Բոլոր ելույթ ունեցողների խոսքում հստակ ընդգծվում էր մի միտք՝ հուշահամալիրը միավորում ու մարմնավորում է բոլոր սերունդների մղած հերոսական պայքարը, եւ այն պետք է լինի ոչ միայն խոնարհումի, այլեւ ոգեշնչման աղբյուր ներկա եւ գալիք սերունդների համար: Հանդիսության գեղարվեստական մասում ասմունքով հանդես եկան Ներքին Սասնաշենի միջնակարգ դպրոցի սաները, Սունդուկյանի անվան թատրոնի դերասանուհի Ժենյա Ավետիսյանը, ելույթ ունեցան Սասնաշենի «Սասուն» պարի համույթը, Հենրիկ Հովհաննիսյանի մարտական ընկերները:

Նման հուշահամալիրի բացումը ապացույցն է այն բանի, որ ներկա սերունդը իր մեջ կրում է նախնյաց ազատագրական պայքարի ավյունն ու գաղափարաբանությունն՝ իբրեւ ժառանգություն: Իսկ այն պայքարը, որի հիմքում գաղափարն է, միայն հաղթանակով է պսակվում:

Ս. Ս.